ԱՐՄԷՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՑԻՆ ԿԱՂԱԿԱԿԱՆ ԵՒ ԱՑԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամեն տեղի համար ուր այս լրագրի մուտքը արգիլուած չէ, ամբողջ 18րդ չրջանի (902 Նոյ. —903 օգոստ.) բաժնորդագինն է 20 ֆր. կանխիկ կարելի է նաև բաժնորդագրուիլ քանի ամսի համար որ ուզուի, ամեն մէկ ամսականը 2 ֆր. հաշուելով և 1903 օգոստոս ամսէն անդին չանցնելու պայմանով։

Նամակ և ծրարակիւք է զրկել հետևեալ հասցէով. M. PORTOUKALIAN, Rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France).

ԺԸ ՏԱՐՒ ԹԻՒ 5

1902 ԴԵԿՏԵՄԲԵՐ 3

1902 ՆՈԵՄԲԵՐ 20 (Հ. Տ.)

ՀԱՅԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԳՈՎԱԶՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրութիւնը, երէկ հարկ համարի, հասցէագրով և կամ ամսամբ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները։ Գրաւոր չէ վերադարձուներ չհրատարակուած ձեռագիրները։

Յանուցմունք կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։

Յանուցման 1 միլիմեթրը 1 սանտիմ արժէ. 1 գլխագիրը 2 սանտիմ։

Les annonces, en français et en arménien, sont reçues aux bureaux de Rédaction : Rue Beauvoisin, 8.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գարսից Շահն ի Լոնտոն (Թղթակցութիւն Լոնտոնէն). — Յայտարարութիւն Լոնտոնի Հայկական Որբանոցին. — Հայեր ի Ռուսիա. — Հայեր ի Թիւրքիա. — Խախտած հանգստած երկու Հայեր. — Բարիգի Հայերի կեանքին. — Բռնագրաւեալ եւ խօրասանճեակի հարսնիքը կ. պոլսի մէջ. — Նուիրատուութիւններ Սրմէնիային. — Նոր հրատարակութիւններ. — Թիւրքիոյ լուրեր. — Տաժատ Մահմուտ փաշայի հիւանդութիւնը. — «Արշալոյս» լրագիր. — Յանուցմունքներ։

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ "ԱՐՄԷՆԻԱ,,Ի ԺԸ ԵՐՋԱՆԻՆ

1902 ՆՈԵՄԲԵՐ–1903 ՕԳՈՍՏՈՍ

18րդ չրջանի բաժնորդագրութիւնը սկսի 1902 Նոյեմբերէն և կը տեւէ մինչև 1903 օգոստոսի վերջը։ Ամբողջ 18րդ չրջանի բաժնորդագինն է 20 ֆրանգ կանխիկ վճարելի։ Կարելի է նաև բաժնորդագրուիլ քանի՛ ամսի համար որ ուզուի, ամսական 2 ֆրանգ հաշուելով։

Անոնք որ ԱՐՄԷՆԻԱՒ ՕԺԱՆԴԱԿ կը գրուին մեր հրատարակած Օժանդակութեան կանոնագրի համեմատ կատարելով իրենց պարտականութիւն, իրաւունք կունենան, իրենց ստացած 1 օրինակ Արմենիաէն զատ — որի համար ամբողջ բաժնորդագինն 20 ֆր. պէտք է վճարեն —, քանի՛ անձի համար որ ուզեն, Արմենիա բերել տալու իրենց ստացած լրագրի ծրարին մէջ դրուելով և կէս բաժնորդագնով, այսինքն՝ ամբողջ չրջանին համար 10 ֆր.ով և կամ ամսական 1 ֆր.ով։ Յանկացողին կը ղրկենք «Արմենիաի Օժանդակութեան» համար մեր հրատարակած կանոնագիրը։

Բաժնորդագիններուն կանխիկ վճարումը մեծ դիւրութիւններ կընծայէ թերթի կանոնաւոր ընթացքին և յայտնի է որ Եւրոպայի և Ամերիկայի մէկ ամէն ազգեր սովորութիւն ունին իրենց ստացած լրագրի բաժնորդագինը կանխիկ ղրկելու. անոր համար իրենց լրագիրները ալ կրնան կանոնաւոր ընթացք մ՚ունենալ։

ԳԱՐՍԻՒ ՇԱՀՆ Ի ԼՈՆՏՈՆ

(Շար. 4րդ բուեն եւ վերջ)

Լոնտոն, 29 օգոստ. 902

*Կերկի թէ հինգշաբթի օրը նշանակուած էր Մաքսիմի գործարանը այցելելու և յետոյ պարսկական դեսպանատունը ճաշելու ու պատգամաւորութիւններ ընդունելու. վասնզի այն առաւօտ ժամը 11ին ատեններէը Հայ Հայրենասիրաց նախագահ Տիար Կ. Բակոբեան հետևեալ հեռագիրը կը ստանար դեսպանատունէն. «Նորին վեհափառութիւնը պիտի ընդունի ձեր պատգամաւորութիւնը ի դեսպանատան այսօր կէսօրէն յետոյ ժամը 2½ին »։ Ուստի այս կարճ միջոցին մէջ հարկ եղաւ պէտք եղած կարգադրութիւններն ընել հեռագրելով Լոնտոնի ականաւոր ազգայնոց և վանել որ պատգամաւորութիւնը պատկառելի բազմութեամբ ըլլայ վերջէն լսուածին նայելով, Լոնտոնի Հրեաները նաև սոյն իմաստով հեռագիր ստացեր են նոյն առաւօտ, բայց 4 ժամուան սուղ միջոցին մէջ չկարողանալով ներկայանալ, նախընտրեր են իրենց ուղերձը մատուցանել Գարսից դեսպանին միջոցաւ. իսկ Լոնտոնի հնդկական ժամէտականք ներկայացած են պարսկերէն լեզուաւ մի ուղերձով և 80 տողէ բաղկացեալ երկար ոտանաւորով մը։ Երբ ընդունելութեան ժամը կը հասնի, սոյն պատգամաւորութիւնը կառաջնորդուի ընդունելութեան սրահը, կը կարդայ իւր ուղերձը որ բաւական երկար կը լինի, Շահը չնորհակալութիւն կը յայտնէ։ Իսկ կարգը ոտանաւորին եկած ատեն՝ բանախօսը կը չանայ բոլորն ալ կարդալ, մինչ երբ առաջին տունը կը կարդայ, կը բաւէ կըսեն. բայց բանաստեղծը տաքնալով երկրորդ մ՚ալ կը կարդայ։ Եպարքոսը բաւական է, կըսէ. ասիկայ մարիկ չըներ, կը շարունակէ։ Շահն ինք կերկրորդէ Եպարքոսին չանքերը. Պարտպօրօ հաուս ղրկեցէք, կըսէ. և ուրիշ աստիճանաւոր մ՚ալ դիրքը բանախօսին ձեռքէն կառնէ, բարձրադոյն հրամանը տեղը տարած լինելու համար։ Շահն իւր աչքերը Հայ պատգամաւորութեան գլխաւորին կը դարձունէ. նա ալ իւր դեղերումը չկրնար պահել։ Գաղթականները tableau(պատկեր) կըսեն այսպիսի անակնկալ դիպուածներու. բայց այս առիթ կուտայ Շահին հետ անձամօթ եղողներուն իւր հանգամանքները ուսումնասիրելու որ այս տպաւորութիւնը յառաջ կը բերէ. ահաւասիկ արտաքոյ կարգի գարսիկ մը որ թէ՛ բարի է, թէ՛ հեզ է և ճիշդ մի Անգլիացի ձեռնդրմեռնի տիպարը կը կրէ։ Այս պահուս Տիար Բակոբեան կը հարցունէ դեսպանատան բարեկամի մը թէ ի՛նչ լեզուաւ պէտք է խօսիլ վեհ. Շահին. տաճկերէն գիտէ կըսեն, որովհետև բոլոր ներկայք իրենց հասկցած լեզուով կուզէին իմանալ թէ Հայերն ի՛նչ ուներին ըսելիք։ Յայտնի է որ մենք մի ուղերձ պատրաստած էինք որ երբ 1900ին Գարսից Շահը չկարողացաւ Լոնտոն գալ, իրեն Օսթենտ ղրկուած էր ու 6 ամիս յետոյ ալ հրատարակուած էր նոյն տարուան «Թայմզ»ի գեկտ. 25 թուոյն մէջ որ կարծեմ Արմենիաի մէջ ևս լոյս տեսաւ։ Երբ Հայ պատգամաւորութիւնը հրաւիրուեցաւ խօսիլ Ն. Վ. Շահին, Տիար Բակոբեան՝ ունենալով երկու Հայեր իւր աջն ու ձախը՝ յետ մի խոնարհութեան սկսաւ իւր բանախօսութիւնը։ Երբ առաջին մասն լմընցուց գեղահնչիւն տաճկերէնով, անդիէն ասդիէն ղինք կը քաջալերէին խո՛ւպ, խո՛ւպ (լա՛ւ, լա՛ւ) ձայներով։ Իսկ երկրորդ մասն սկսելու ատեն ըսաւ թէ Հայոց արդէն մատուցած ուղերձին մէջ մանելու չէ, զի Ն. Վեհափառութիւնը անոր իրազեկ ըլալու է արդէն։ Այո՛, գիտեմ, ըսաւ վեհ. Շահը։ Ուստի պէտք էր խնդրոյն բուն հոգւոյն մէջ մտնել առանց երկարաբանութեան։ Երբ լմնցուց երկրորդ պարբերութիւնը, անդիէն ասդիէն կը լսուէին խո՛ւպի խուպ բառերը և թէ «ի՛նչպէս լաւ կարտասանէ տաճկերէնը »։ Այս ընդմիջումները թէև մի տեսակէտով քաջալերիչ էին, սակայն միւս կողմանէ Անգլիոյ մէջ ասոնց անսովոր լինելովը վրդովիչ ալ հանգամանք մ՚ունէին. սակայն «Ալլահ սիզէ պի՛ն պի՛ն էօմիւըլէր վէրսին, էֆէնթի՛մ»ով Տիար Բակոբեան լրացուց իւր համառօտ այլ խիստ դգայուն ճառն ու երեք քայլ ետ քաշուեցաւ իւր ընկերներով։ Իրը կէս րոպէ մեծ լռութիւն տիրեց. Շահը զգածուած էր, Տիար Բակոբեանի պարզևական հասակն ու տեսքը իւր ունիցէ նախարարներուն առաջիկայութենէն նուազ պատկառելի չէ՛ր։ Ն. Վեհափառութիւնը մօտեցաւ Տիար Բակոբեանին և տաճկական բարբառով այսպէս ըսաւ. « Մէմնունղըմ. սիզինիմ Լրմենի միլլէթինէ չօխ չօխ թէվէձձիհ. հիմմ վար. ինշալլահ ատուտ օլուրղար », իրը անձ մը որ կը կշռէ իւր գործածած ամէն մէկ բառը։ Գարձեալ բառեր լսուեցան սրահին խորէն։ Շահը գնաց իւր կառքը նստելու ու մենք ընկերացանք մինչև դեսպանատան դուռը և յետոյ Տիար Բակոբեան զանազան անձանց չնորհաւորութիւնները ստացաւ։ Հետևեալ առաւօտ, Լոնտոնի մամուլը կը նկարագրէր այս պատգամաւորութիւնը, «Թայմզ» լրագիրն ընդունելութեան տեղը Մալպօրօ Հաուս փոխադրելով, իրը արժանաւորագոյն տեղ։ Օգոստ. 21ի «Տէյլի Թէլէկրաֆ» և «Տէյլիկրաֆիք» թերթերը այսպէս կը նկարագրեն Տիար Բակոբեանի ճառը ու վ. Շահին պատասխանը.

His Majesty, surrounded by his Grand Vizier and Ministers of State, accorded an audience to a deputation from the Armenian community in London, headed by Mr G. Hagopian, chairman of the Armenian Patriotic Association, at the Imperial Persian Legation. Mr Hagopian, who acted as the spokesman of the deputation, addressing his Majesty, said they begged leave to congralute his Majesty on his presence in the British metropolis; that they thanked him for the protection his Government had at times accorded to their race; and ardently hoped his Majesty would continue his kindly interest in their welfare.

He also thanked his Majesty's Grand Vizier and other statesmen who were carrying out his Majesty's wishes in this respect.

Mr Hagopian ended his speech by praying for the well-being and prosperity of the people of Persia, and expressed hearty wishes for a long and happy life for his Imperial Majesty.

The Shah replied briefly saying that he had always felt a very strong sympathy for the Armenian people, and that, please God, their comfort and well-being would be assured to them.

The deputation bowed deeply to his Imperial Majesty in token of their deep appreciation of his gracious words, and retired, being exceedingly pleased with their reception.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԾՆՈՒԴԸ

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Հայ սովետական գրականության վերածնման գործում մեծ դեր խաղաց Հայաստանի Կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության կենտրոնական կոմիտեի 1925 թ. հուլիսի 8-ի որոշումը «Գրական կազմակերպությունների մասին», որով վերացվեցին գրական տարբեր խմբակցությունները և ստեղծվեցին միասնական գրական կազմակերպություններ։ Այդ որոշումը հնարավորություն տվեց հավաքելու հայ սովետական գրողների ուժերը, ստեղծելու նրանց միասնական կազմակերպությունը, որը կարողացավ ղեկավարել գրական պրոցեսը, ստեղծագործական ուղղություն տալ գրողների աշխատանքին։

Կուսակցության որոշումը ոչնչացրեց գրական տարբեր խմբակցությունների ստեղծագործական սահմանափակությունները, ազատեց գրողներին գաղափարական այն կապանքներից, որոնք խանգարում էին նրանց ստեղծագործական աճին։ Կուսակցության որոշումը ոչնչացրեց նաև գրական խմբակցությունների միջև եղած թշնամական վերաբերմունքը, որը հաճախ հասնում էր մինչև անհատական անհանդուրժողականության։ Կուսակցության որոշումը ստեղծեց գրողների միջև ստեղծագործական մրցակցության, ընկերական քննադատության, փոխադարձ օգնության և աջակցության նոր հարաբերություններ։

Կուսակցության որոշումը հնարավորություն տվեց ստեղծելու գրողների միասնական կազմակերպություն

նորդարանին և իրենց յորդոր տրուեր է որ կառավարութեան հակառակ ընթացքի մէջ չգտնուին։ Իսկ այն բանտարկեալները որոնք տարբեր գաւառներ կը պատկանէին, իրենց ծննդավայրերը ղրկուելով հոն ազատ արձակուեր են։

— Նպաստից յանձնաժողովը նկատելով որ իր տրամադրութեան տակ 6 օխա թթենիի հունտ կը գտնուի, որ 4 օխան Օսմ. Հանրային Պարտքի վարչութիւնը ղրկած էր իրեն և 2 օխան ալ Պրուսայի Առաջնորդարանը, որոշեց 1½ օխան ղրկել Շապին-Գարահիսար և 1½ օխան ալ Երզնկա որ այն տեղերի վանական հողերին մէջ մշակուին. Ծնացածն ալ բաշխել հայ գիւղացիներուն։ Պէտք է գիտնալ թէ 1 օխա հունտէն 2000ի չափ թրթենի կրնայ յառաջ գալ, որմէ 1000ը ընկուելով, 1000 թթենի կարտագրուի։

Յանձնաժողովը որոշեր է ղրկել նաև մէկ մէկ օրինակ թթենիի մշակութեան այն հրահանգէ որ Հանրային Պարտքի վարչութիւնը ղրկած էր մեր Պատրիարքարան և մէկ մէկ օրինակ ալ այն հրահանգէ որ Պրուսայի Առաջնորդարանը գիւրահասկնալի կերպով խմբագրած և ղրկած էր։

— Տնտեսական խորհուրդը Պատրիարքարանի տարեկան ծախքը 580 հազար ղրուչէն 530.000 ղրուչ (գրեթէ 120.450 ֆր.) իջեցուցեր է, ծախքերի խնայութիւններ ընելով և Պատրիարքարանի պէտքերէն մէկ մասը գնելու համար Նուազուրդի դրութեան դիմելով։

— Ս. Պատրիարքը Նոյ. 15/28ին յանկարծ ականջի տկարութիւն մը ունեցեր է, լսողութիւնը դժուարացնելու չափ. բայց Տքթ. Անանեան որ անմիջապէս հասեր է, հաստատեր է բարեբաղդաբար թէ պատճառը լոկ տեղական էր և պէտք եղած մաքրացումն ի գործ դնելէ յետոյ, Ս. Պատրիարքի լսողութիւնն իր սովորական վիճակն ստացեր է։

— Կ.պոլսէն կը հաղորդեն մեզ հետեւեալը. «Կ.պոլսոյ գրաքննութիւնն իր խստութիւններ անօրինակ կերպով առաջ կը տանի։ Տ. Մանուէլ Մերախորհանի երկասիրութիւններն, որոնք արդէն Մէարիֆի արտօնութեամբը տպագրուած են Կ.պոլիս, խստիւ արգիլուեցան ծախուելէ և որի քով որ գտնուին, անմիջապէս կը գրաւուին և ունեցողն ալ երկար բանտարկութեան կենթարկուի»

ԿԱԽԱՂԱՆ ՀԱՆՈՒԱԾ ԵՊԿՈՒ ՀԱՑԵՐ

Թիւրք կառավարութիւնը պայզիտի մէջ, որ ռուսական սահմանագլխի ամենամօտիկ քաղաքն է, կախաղան հանել տուեր է 2 հայեր, Ալաշկերտցի Խաչատուր վարժապետ Ցէր. Յատուածատուրեանը և Պուլանըխցի Աւետիս Տէր-Յարգսեանը, որոնք իբրև յեղափոխական ձերբակալած և բանտարկած էր։

«Դրօշակ» կը յայտարարէ ատոնց համար թէ իր կուսակցութեան կը պատկանէին։

ԲԱՐԻԶԻ ՀԱՑԵՐԻ ԿԵԱՆՔԷՆ

Բարիզէն գրած են կ. պոլսի «Բիւզանդիոն»ին. «Բարիզի Հայոց եկեղեցւոյն Հոգաբարձութեան Ատենապետ Էֆէնտիան էֆ. կառուցուող եկեղեցւոյն համար կալուածի մը յատկագիծը պատրաստել տուեր է զոր իր անձնականէն պիտի չինէ 100.000 ֆր. Ծախսելով Գանձապետ Զօրայեան էֆ. ալ մոտերը է մի քանի բարեսէրներու գործակցութեամբ ուրիշ կալուածմը չինել։ Էֆէնտիան էֆ.ի չինելիք կալուածը պիտի բերէ տարեկան 7.500 ֆր. և Զօրայեան էֆ.ինը՝ 5.000 ֆր., գումար 12.500 ֆր., եկեղեցւոյն տարեկան ծախքը գէթ ըստ մասին ապահովելու համար։»

— Վսեմ. Պօղոս Նուպար փաշա որ Բարիզ կը գտնուէր, վերադարձեր է Եգիպտոս։

ԲՐՈՒՆԳՈՒԼԵԱՆ—ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆԻ ՀԱՐՕՆԻՒԸ Կ. ՊՕԼՍԻ ՄԷՋ

Ասկէ առաջ հրատարակած էինք Մուչաւի (Աւստրիա) հայազգի անուանի Բրունգուլեան գերդաստանի անդամներէ մէկին՝ Կ.պոլսի անուանի Հայերէն Վսեմ. Տօքթ. Խօրասանճեանի աղջկան հետ նշանուած լինելու լուրը։ Այժմ իրենց ամուսնութեան հանդէսի մասին կը կարդանք հետեւեալը Կ. պոլսի «Բիւզանդիոն» լրագրին մէջ.

Երէկ (Նոյ. 14/27) չքեղ հանդիսով տեղի ունեցաւ պսակադրութիւնն Ասպետ Աստուածատուր Պողոսեան Փօն Բրօնգուլի ընդ Ազն. Օր. Մելինէ Խօրասանճեանի, հնքահայրութեամբ Գաբրիէլ էֆ. Սէրվիչէնի։ Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցիին բոլոր լահերը վառուած, տաճարն ամբողջ լուսոյ մէջ կը լողդողար։ Եկեղեցւոյ գետինն ու սեղանը գոյնզգոյն ծանրագին գորգերով ծածկուած էին։ Սեղանին առջև դրուած էին ճերմակ վարդերով զարդարուած երկու աթոռներ զոր յատկապէս պատրաստած էին Հիւանդանոցի արհեստարանի որբերը, իբր նուէր ամուլին։ Աթոռներէն մին կը կրէր Մ տառը, Օր. Մելինէ Խօրասանճեանի անուան սկզբնատառը, և միւսը Պ տառը, Ասպետ Պողոսեան Փօն Բրօնգուլի անուան սկզբնատառը։ Ժամ 8ին հետզհետէ սկսան գալ հրաւիրեալները որոց մէջ կը նշմարուէին Հայ և օտարազգի անձնաւորութիւններ, պետական պաշտօնատարներ, բժիշկներ, ծանօթ դրամատէրեր, վաճառականներ և այլն և այլն։ Ժամ 9ին արդէն եկեղեցին ամբողջապէս լեցուած էր, երբ Բերայի Աւագերէց Տ. Մկրեան Ա. քհնյ.՝ շրջապատեալ քահանայներէ և դպիրներէ, կատարեց հալածօրհնէքը։ Ջեռնտուութեան արարողութիւնը կատարեց երբ բեմին վրայ երևցաւ Ս. Պատրիարք Հայրն իր շուրջն ունենալով Դիմաքսեան Տ. Հմայեակ և Երէցեան Տ. Գէորգ Սրբազանները, երեքն ալ ընտիստաւորած, չաթալթագերով և ծանրագին եպիսկոպոսական զգեստներով։ Տ. Գնել Գալէմքեարեան և Տ. Բարգէն Վ. Կիւլէսէրեան վեղար ի գլուխ կեցած էին։ Ջեռնտուութեան արարողութենէն վերջ Ս. Պատրիարքը պարագային յարմար քարոզ մը խօսելով և Մուչովայի Հայ գաղթականութեան մէկ համառօտ պատմութիւնն ընելով յիշեց Բրօնգուլեանց և Զունդեանց գերդաստաններն որք օտարութեան մէջ չեն մոռցած իրենց նկեղեցին, կրօնքն և լեզուն։ Օտար արևի տակ պետական բարձր պաշտօններու հասած, մեծամեծ հարստութեան տէր եղած և սակայն իրենց լոյս հաւատքը պահած պահպանած են և իբր ապացոյց ատոր՝ Ասպետ Միքայէլ Փօն Բրօնգուլ իր զաւկին՝ Ասպետ Աստուածատուր Պողտան Փօն Բրօնգուլի՝ ամուսին կընտրէ Խօրասանճեան ամիրայական գերդաստանէն Վսեմ. Տքթ. Խօրասանճեանի դուստրը Օր. Մելինէ Խօրասանճեան։ Տքթ. Խօրասանճեան, այնքան ծանօթ դէմք մը մեր հասարակութեան բարձրագոյն դասին մէջ, Գաւառեան և Ազգին հաւատարմագոյն սիրելի և իր բժշկական ասպարէզին մէջ այնպիսի անուն մը չինած է որ փառք կը բերէ իր պատկանած հասարակութեան և երկրին։ Այսպիսի հօր մը բազմակողմանի հմտութեամբ զարգացած դուստրն է որ կնութեան կուտանք Բրօնգուլեան գերդաստանին զաւակներէն Ասպետ Աստուածատուր Պողտան Փօն Բրօնգուլի։ Ն. Սրբազնութիւն խօսքն հարսին ուղղելով յարեց. «Վստահ եմ որ գո՛ւ, միշտ քու նկեղեցւոյդ, քու լոյս հաւատքիդ մէջ հաւատարիմ պիտի մնաս. գու արժանաւոր զաւակը պիտի մնաս քու աղնուատոհմ գերդաստանիդ. քեզ կը ղրկենք օտարութեան մէջ, բայց ապահով եմ որ դո՛ւ, քու եկեղեցասիրութեամբդ և բարեսիրութեամբդ, քու չուրջդ գտնուած և իրենց մայրենի լոյս հաւատքէն հեռացած Հայերուն բարի օրինակ պիտի ըլլաս. այս փառքը քե՛զ վերապահուած է։ Գնա՛ այս հաւատքով, այս սիրով, և երջանիկ եղիր։ Մեք այսօր ո՛չ թէ միայն Բրօնգուլեանի զաւակը Խօրասանճեանի զաւկին հետ պսակելու խորհուրդը կը կատարենք, այլ նաև հեռաւոր երկրի Հայ եկեղեցիի վրայ կատեւցնենք կեդրոնի Հայ եկեղեցիին ամէնէն արժանաւոր անդամներէն մին։ Եկեղեցական և ընտանեկան այս միութիւնն օրհնեա՛լ ըլլայ։» — Պսակի արարողութեան աւարտումէն վերջ բոլոր հանդիսականներն առաջնորդուեցան Սրբանտիի սրահը ուր նուագածուաց խումբը Համիտիէ քայլերգն երգեց երբ հարս ու փեսայ սրահէն ներս մտան։ Ցետոյ սկսան պարերը մեծ ոգեւորութեամբ որք տեւեցին մինչև գիշեր։ Ճոխ չքասեղան մը հրաւիրեալներու տրամադրութեան ներքև գրուած էր։ Ս. Պատրիարք Հայրն և ներկայ եկեղեցականները պահ մը Սրբանտիի սրահն յատկապէս պատրաստուած սենեակ մը առաջնորդուեցան և Ն. Սրբազնութեան ներկայացան Վսեմ. Տքթ. Խօրասանճեան, փեսին հայրը՝ Ասպետ Միքայէլ Փօն Բրօնգուլ, և հարսն ու փեսան, և Ս. Աթոռ համբուրեցին և կընդկին բարեմաղթութիւններ տեղի ունեցան արժանավայել մեծարանքներով։ Տէր և Տիկին Ասպետ Բրօնգուլ Օքէլ Ուսայեալ գացին ուր իջևանած էին արդէն հայր և որդի Բրօնգուլեանք։

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՓՄԷՆԻԱՒՆ

Շնորհակալութեամբ կը հրատարակենք Արմենիահ տարածման նպաստելու համար մեզ հասած հետեւեալ նուիրատուութիւնները.

Եգիպտոսէն Հայրենասէր մը 30 ֆր.։ Գահիրէէն Մ. Մարգարեան 40 ֆր., Տ. Մ. Փ. Վ. 20 և Ց. Ձ. 10 ֆր. և 65 անդմ.։ Ալեքսանդրիայէն Գ. Թաթուլ 25 և Փ. Զ. 5 ֆր.։ Սամարանգէն Գ. Ց. Միքայէլեան 42 և Ա. Ց. Միքայէլեան 22 ֆր. և 15 անդմ.։ Բատաւիայէն Ս. Ա. Ստեփաննոսեան 30 ֆր.։ Թանգուէնէն Բաղտասար և որդի 14ֆր.։ Րիչմոնտէն Ա. Տ. 14ֆր.։ Մանչեսթրէն Գ. Նազարէթեան 10ֆր.։ Գառուզ Ալդաէն Ց. Փորթուգալեան 5 ֆր. և 50 անդմ.։ Մ. Քաղաքէն Հայրենասէր Հայ մը 5 ֆր.։ Պրայթընէն Կ. Բ. 5 ֆր.։ Մուչատաէն Գ. Հ. 5 ֆր.։ Նիւ Եորքէն Տօքթ. Թօփրահանեան 5 ֆր.։ Կիլիկիահէն Հայ կաթոլիկ մը 4 ֆր. և 70 անդմ.։ Րաւինգաւլէն Ցովհաննէս Առաքելեան 4 ֆր. և Զլահէն Բ. Վ. 4 ֆր.։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Շնորհակալութեամբ առացած ենք հետեւեալները.

ՎԱՋԳԷՆ — ԵՐԳԱՐԱՆ։ Հաւաքեց Տիգրան Տէրոյեան (վազգէն, նահատակուած յունուար 2, 1898)։ Պօսթըն, Տպարան «Հայրենիք»ի. 1901։ (Ազգային և սիրային բանաստեղծութիւններէ ճոխ հաւաքածոյ մ'է, զանազան հրատարակութիւններէ և ժողովրդական աւանդութիւններէ հաւաքուած, որ'ն նմանը Միանաարեանցի «Քնար Հայկական»ի հրատարակութենէն յետոյ տակաւին չէինք ունեցած։ Կը բականայ 600 մեծադիր երեսներէ և զարդարուած է Տիգրան Տէրոյեանի (վազգէն, որ հաւաքած է այս երգեր), Խրիմեան Հայրիկի, Խորէն Նարպէյի, Ղևոնդ Ալիշանի, Գամառ-Քաթիպաի, Միքայէլ Նալբանդեանցի, Մկրտիչ Պէշիկթաշլեանի, Պետրոս Դուրեանի և Րաֆֆիի պատկերներով, որոնց կըցուած են անոնց համառօտ կենսագրականներ։ Թէև այս ընդարձակ գիրքը տպագրական ինչ ինչ սխալներէ և կենսագրականներուն մէջ քննադատելի ինչ ինչ կէտերէ զերծ չէ, բայց ամբողջ գործը նկատի առնելով շատ գնահատելի աշխատանք մ'է որ յանձն առած են հրատարակիչները։ Այդպիսի ընդարձակ երգարանի մը պէտքը վաղուց է որ զգալի եղած էր։ Երգերի ընտրութեան մէջ կուսակցական խտրութեամբ վարուած չեն և այդ ալ պատիւ կը բերէ հրատարակիչներուն անկողմնակալութեան ղգացման զուտ գրական և հայրենասիրական երկի մը մէջ։)

Գինն է, փոստի ծախքով, Ամերիկայի համար 1½ տոլար, արտասահմանի համար 7 ֆր., իսկ Պարսկաստանի համար 6 ֆր.։ Հասցէը յատկացուած է զուտ բարեսիրական գործի մը։

Գնել փափաքողները դիմելու են այս հասցէին.

Monsieur K. Khoranian
379 P. O. Box LYNN Mass.
(Etats-Unis d'Amérique)

Ձեռք կը ծախուի նաև Պոսթոնի մէջ «Հայրենիք»ի տպարանը։

***

ՑԻՐԱՆԻ ԱՐՑԻՒՆԳԸ.—William Watson. Թարգմանեց անգլիերէնէ խոտորով. Բարիզ. Տպարան «Անահիտ»ի. 1903։ (Հայկական կոտորածներուն առթով անգլիացի մարգասէր բանաստեղծ Ուիլիըմ Ուոթսընի գրած ոտանաւորներուն հայերէն թարգմանութիւնն է որ կը բաղկանայ 22 երեսէ։) Գին 50 սանթիմ. Գնել ուզողներ պէտք է դիմեն

M. Armène Ardontz
43, Douglas Road
(Angleterre) MAIDSTONE

*
* *

Esquisse d'une Grammaire comparée de l'arménien classique, par A. Meillet. Vienne. 1903. Imprimerie des PP. Mékhitharistes. Dédiée à la mémoire de Mgr Arsène Aïdyn. Pages XX+116 in 8° — Prix 6 francs.

(Բարիզի Արևելեան կենդանի լեզուներ վարժարանին մէջ հայերէն լեզուի դասախօս (բրօֆէսէօր) Տիար Ա. Մէյէի գրած քննական տեսութիւնն է հայերէն գրաբար լեզուի կազմութեան և անոր պատմական ծագումնեբրին վրայ. այդ խնդիրներով հետաքրքրուղ բանասէրներին համար շատ ուշագրաւ ուսումնասիրութիւն մը։ կը ծախուի վիէննա, Մխիթարեան Պատ. Միաբանութեան տպարանը որին պէտք է դիմել ամանալու համար։)

ԹԻՒՐՔԻԱՅԷՆ ԼՈՒՐԵՐ

Նէճմի գաւառի Արաբները չրջապատեր և կողոպտեր են կարաւան մը որ Պասրայի չրջակայները սուլթանի ունեցած ընդարձակ կալուածներուն հասոյթներէն մեծ գումարներ կը փոխադրէր Կ. պոլիս ղրկուելու համար։

— Ռուսիոյ ցարն Ալեքսանդր Նեւսքիի մեծ պատուանշանը ղրկեց Կ. պոլսի պարսկական գեսպան Էրֆա-խան Տէօվլէ Իչխան Մերզա Րիզա խանին։

— Թիւրքապարսիկ սահմանագլխին վրայ չինուելիք ամրոցներուն համար պէտք եղած գրամները վճարել հրամայող իրատէ մ'ելաւ սուլթանէն։

— Պօմպէյէն (Ընդկաստան) տրուած լուրի մը նայելով, Պարսկային Ծոցին մօտիկ և Թիւրքի անուանական գերիշխանութեան տակ գտնուղ Նէճմի սուլթանը մեծ բանակի մը գլուխն անցած, նորէն յարձակեր է Վահապիներուն գլխաւորին՝ Ապտիւլ Ազիզի վրայ. այժմ կը պաշարէ էլ Րիատին որ այս տարիի սկիզբը Վահապիներն առած էին։ Ապտիւլ-Ազիզի կուսակիցները լքած են զինք։

— Երուսաղէմէն տրուած տեղեկութեան նայելով, անցած չարաթ (Նոյ. 23-29) նափթի մէջ քօլէրային բռնուած են 132 մարդ և մեռած 86. Հէպրոնի մէջ 10 և Լիտտաի մէջ 3 մարդ բռնուած են։

ՏԱՄԱՏ ՄԱՀՄՈՒԴ ՓԱՇԱՒ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ

Պրիւսսէլի «Բըդէ Պլէօ» լրագիրը կիմացունէ թէ Տամատ Մահմուտ փաշան որ իր քեռայր սուլթան Համիտի ձեռքէն Եւրոպա փախած ապաստանած և վերջերս ալ Պելժիգի մէջ տեղաւորուած էր, ծանր կերպով հիւանդացած է։ Իր վիճակ յուսահատական կը համարուի։

ԱՐՇԱԼՈՅՍ

Լրագիր Ազգային, Գրական եւ Քաղաքական

Եգիպտոսի մայրաքաղաքին Գահիրէի մէջ հրատարակուղ մեկ հայերէն թերթն է այժմ Արշալոյսն որ յայղած է շարունակուիլ 4 տարիէ ի վեր, մինչդեռ այդտեղ լոյս տեսած հայերէն ուրիչ թերթեր չեն կրցած այդքան երկար կեանք ունենալ։ կը հրատարակուի չորեքշաբթի և շաբաթ օրերը։ Տարեկան բաժնորդագինն է 20 ֆր., իսկ վեցամսեայն 12 ֆր.։

Հասցէն՝
E. Torossian, Direct. propr. du journal arménien « Archalouyce »
(Egypte) CAIRE

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎԱՃԱՌՈՒՄԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ՄԷՋ

Կը ծանուցանենք որ Մ. Փորթուգալեանի հրատարակած տետրակները գնել ուզողները Ալեքսանդրիայի մէջ (Եգիպտոս) կրնան գնել զանոնք Տիար Յարութիւն Ղազիկեանէն («Նոր Դար» կաթնավաճառանոցը, Սարրաֆիյէ փողոց) ճիշդ միևնոյն գնով ինչ գնով որ կը ծախուին Մարսէյլի մէջ։

Ալեքսանդրիայի մէջ հրատարակուղ սոյն թերթի տարեկան բաժնորդագինն է 15 ֆրանգ (3 տոլար)։

Հասցէն՝
Monsieur S. Burat
Rédaction PUNIG
(Egypte) ALEXANDRIE

ԵՒՐՈՊԱՑԻ
ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

«Եւրոպայի Հայ Ուսանողական Միութեան» կարգադիրը ծանձնաժողովը կը խնդրէ մեզնէ ծանուցանել որ իրեն նամակները գրելու և առ հասարակ դիմումներ անելու համար, պէտք է դիմել այս հասցէով.

Union des Étudiants Arméniens
de l'Europe
rue de l'Ecole-de-Chimie, 2
(Suisse) GENEVE

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

Արմէնիայի խմբագրատան մէջ ծախու կը գտնուին հետեւեալ գիրքերը որոնց ապրնկ նշանակուած գիներին մէջ հաշուուած է նաև ղրկելու փոստի ծախքը։

Ծրարները ապահովագրուած (recommandé-registered) ստանալ ուզողները պէտք է որ ամեն մէկ ծրարի (մինչեւ 2 քիլօ) համար 25 սանթիմ ապահովագրութեան ծախքը վճարեն։

Արմէնիայի խմբագրատան մէջ ծախու գտնուած գիրքերի մանրամասն ցուցակը հրատարակուած է Արմէնիայի 17րդ շրջանի 38, 39 և 40 թիւերուն մէջ։

Այդ թիւերէն յատկապէս առնի տպած լինելով, պատրաստ ենք ձրիապէս ղրկել անոնց որոնք կը փափաքին մեր ղրացուցակները ունենալ, եթէ գոնէ 50 սանթիմ ղրկելով գիրք ուզեն մեզնէ նախապէս այդ ուզուած գրքի ծրարին մէջ դրուելով կը ղրկուին ղրացուցակները ալ։

Ամեն երկրի փոստաթոշը, քանի՛ սանթիմի համար ալ լինի, մանաւանդ փոստ կուտան մեզ վճարուելու համար Մարսէյլի մէջ։

ՀԱՑ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱՑ (1794-1894) ՅՈՒԲԵԼԻՆԻ ՏԱՏԿԵՐԸ

Հայ տպագին մէջ լրագրի սկզբնաւորութեան դարադարձին առթով 1894 թուականին հրատարակուած այս միտծալ դիրքով և լուսատիպ (phototypique) չքեղ պատկերի մեծութիւնն է 50×35 հարիւրորդամէթր և ապուած է 70×45 հարիւրորդամէթր քարտոնի (carton) վրայ այլ և այլ բնագրով։ Մէյտեղը դրուած է հայ լրագրութեան հիմնադրին, Տ. Յարութիւն Քհնյ. Շմաւոնեանի, պատկերը և բոլորտիքը՝ 1894ին հայերէն լեզուով հրատարակուղ բոլոր լրագիրները, անոնց գրեթէ ամենքի խմբագրապետներուն պատկերներովը։

Գինն է 4 ֆրանք, ճանապարհածախքը մեկտեղ հաշուած. իսկ գարնակատուանի համար 2 ֆրանք և 50 սանթիմ։

*
* *

Գալուստեարեան Հ. Գ.— Պատմութիւն հայ լրագրութեան ի սկզբանէ մինչև մեր ժամանակը. Հատոր Ա. 1794-1860։ Մէկ լուսատիպ պատկերով։ Գինն է, ճանապարհածախքովը մեկտեղ, 2 ֆր. և 50 սանթ.։

Վերոգրեալ թէ՛ պատկերը և թէ՛ գիրքը կարելի է ստանալ Արմէնիայի խմբագրատունէն, արժէքը կանխիկ ղրկելով։

ՇԷՔՍՔԻՐԻ ՀԱՄԼԷԴԸ

Շէքսքիրի Համլէդը որ արևմըտեան աշխարհարար լեզուով հայերէնի թարգմանած է քալ անգլիագէտ Տիար Գարեգին Ց. փափազեան, կարելի է ստանալ նաև Արմէնիայի խմբագրատունէն։

Տպագրուած է վիէննայի Մխիթարեանց տպարանը, մաքուր թղթի վրայ և ունի մեծ ութածալ գիրքով 183+իդ երես։

Գինն է 2 ֆրանգ և 50 սանթիմ։

ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐԸ

(Կ. ՊՕԼՍՈՑ ՀԱՑՈՑ ԿԵԱՆՔԷՆ ԱՆՆՈՒՆԱՅ ՄԻ ԻՐԱԿԱՆ ՎԷՊ)

ԴՐՆԱՑ ԱՉԱՂԱՐՏԻՆ

Այս հետաքրքրաշարժ գրուած կը ներկայացունէ ընտանեկան տխուր պատկերներէ մին ուր կը տեսնուի թէ անբարոյական մի հայր իւր տպական ուած վարքուբարքով որչա՛փ չարքաշներէ պատճառ դարձած է և վերջ ի վերջոյ ինչ ալ իւր որդուս ձեռքով սպաննուած և անհետացած է աշխարհէ։ Գինն 1 ֆրանգ։

ԺՐ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ՆՄՈՇՆԵՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ
ԳՐԱՇ ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐԷՆ

Մ. Փորթուգալեանի գրած հայրենասիրական ուսանուորներէ մի քանին ամփոփուած են այս տետրակի մէջ իբրեւ նմոյշներ գանազան քաղաքներէ մէջ և գանազան պատուորութիւններու առկիւրերբեն գրած ուսանուորներէն որոնք ժամանակին հրատարակուած չի լինելով կարսուած են այժմ։ Այն մի քանի ուսանուորներ որոնք իրենք նմոյշ ամփոփուած են այս տետրակի մէջ, ցիր և ցան կը գտնուին Կ. Պոլիս պատգրուած ազգային երգարաններին մէջ՝ որոց վերջին պատգրութիւնն վաղուց արդէն արգիլուած է, և Ասիա և Ամերիկա լրագիրներուն մէջ։ Նմոյշներէ մէջ փոքրիկ տեղեկութիւններ արուած են նաեւ թէ այդ ուսանուորներ ի՛նչ պատուորութիւններու առկ ներչնուչուելով գրուած են։ Գին 15 սանթիմ։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Մ. Փորթուգալեանի հրատարակած գիրքերէն վրայ մասնաւոր զեղչ կը լինի Պարսկաստանի Հայերին համար որոնց կը ղրկուի փակագծի մէջ նշանակուած գիներուն։

Ա. ՀԱՑ ԴԻՒՑԱԶՆՈՒԷԻ ՄԸ (Սպառած)
Բ. ՀԱՑ ԳԻՒՂԱՑԻ »
Գ. ՅԱՂՄՈՍ ԻՕՐԱՑԵԼԻ »
Դ. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՊՈՒԼՂԱՐԻՈՑ եւ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ՊՈՒԼՂԱՐ ԱՊՕՏԱՒՐԱՑԱՑ (Սպառած)
Ե. ՀԱՑԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԸ.—(Հայաստանեայց պանդխտութեան տխուր հետեւանքներէ սեղմ փոքրիկ պատկերը կը ներկայացունէ վիպական կերպով։) Գինն (90 անթիմ.) 1 ֆրանգ 20 անթիմ.
Զ. ԳԱՄԱՌ ՓԱՓԻԶԱ — ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ յետ ալբուբեցեաց աւարտելուց (Սպառած)
Է. ԼԻՆԶԻ ՕՐԷՆՔԸ ՅԱՃԽԱՀԱՑԱՑԱՑԱՆՈՒՄ. (Սպառած)
Ը. ԹԻՒՐՔԻԱՅ ՀԱՑԵՐՆ ԵՒ ԻՐԵՆՑ ԴՐԱՑԻՆԵՐ (Թիւրքիոյ Հայերին և իրենց գրացի ազգերէ վրայ վիճակագրական և ցեղաբանական ամփոփ և հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կը պարունակէ։ Թիւրքահայաստանի մէջ բնակող այլ և այլ ազգերէ բնակիչներ մուխին բազդատական մէկ ցուցակ ալ կցուած է տետրակին վերջը։) Գին 50 սանթիմ (35 սանթիմ)։
Թ. «ԱՐՄԷՆԻԱ»ի ՑՈՒՇԱՐԱՐ (Ազուեցիայ և տարեշրջանի թիւերը այժմ բոլորովին սպառած և միւներն ժամանակ շատերէ հետաքրքրութեան առարկայ գտնուած լինելով, այդ շրջանի էջ Մ. Փորթուգալեանի գրած առաջնորդող յօդուածներէն էջէ 30ի չափ ամփոփուած են ցուշարարի մէջ որ ութածալ գիրքով 124 երեսներէ կը բաղկանայ) (1 ֆրանք)։ 1 ֆր. 40 սանթիմ
Ժ. ՎՐԷԺ (Պուլկարիոյ մէջ Թիւրքերէ արած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացունէ և ցոյց կուտայ թէ Պուլկարներն ի՛նչպիսի մղոցներէ դիմած են իրենց վրէժ լուծելու համար)։ (15 անթիմ) ,20 անթիմ.
ԺԱ. ԹՈՄԱՍ ՔՈՑԱՐԻՈ (Ցունաստանի մէջ Թիւրքերէ արած բարբարոսութիւնները մի փոքրիկ պատկեր կը ներկայացունէ և ցոյց կուտայ թէ Յոյներն ի՛նչպիսի միջոցներէ դիմած են իրենց վրէժ լուծելու համար), (0,15 սանթիմ) 20 սանթիմ։

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

ՄԱՐՍԷՑԼ
Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի
Le Gérant: François CARRIERE
Marseille. — Imprimerie du Midi